

ԼԵՈՒՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«\_\_\_» \_\_\_\_\_ 2017 թվական

N \_\_\_-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՈՒՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 94 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքից դուրս ամուսնություն գրանցելու համար ընտանեկան կարգավիճակի վերաբերյալ տեղեկանք տալու կարգը և պայմանները հաստատելու մասին» N 94 որոշման հավելվածում (այսուհետ՝ հավելված) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12.1-ին կետով.

«12.1. Տեղեկանքը տեղեկանք հայցողի ցանկությամբ կարող է տրամադրվել նաև երկլեզու՝ համաձայն N 2 ձևի, որի համար գանձվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 12-ի N 608-Ն որոշմամբ նախատեսված ծառայության մատուցման համար վճար:».

2) հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ N 2 ձևով՝

« Ձև N 2

Տրամադրող մարմնի անվանումը

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք		Հայերենով լրացված մասում առկա տվյալները երկրորդ լեզվով	
Ում կողմից			
Տրման ժամանակը			
_____			

(անունը, ազգանունը, հայրանունը)			
Ծնված՝ _____ (տարին, ամիսը, օրը)			
իր բնակության վայրի՝ _____ ՔԿԱԳ տարածքային բաժնի արխիվում ամուսնության ակտի գրանցում չի հայտնաբերվել			
Ընտանեկան կարգավիճակը ամուսնի, այրի, ամուսնալուծված			
Անձը հայտարարել է, որ չունի ամուսնության գրանցում որևէ այլ ՔԿԱԳ մարմնում, և չկան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ամուսնության կնքման արգելք հանդիսացող այլ հանգամանքներ:			

Պաշտոնը \_\_\_\_\_

Պաշտոնը՝ երկրորդ լեզվով \_\_\_\_\_

Անունը, ազգանունը \_\_\_\_\_

Անունը, ազգանունը՝ երկրորդ լեզվով \_\_\_\_\_

(ստորագրությունը) Կ.Տ.

».

3) N 3 ձևում «169.1-րդ» բառը փոխարինել «175-րդ» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 94 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

<b>1.</b>	<b>Ընթացիկ իրավիճակը</b>
	<p>Լեռնային Ղարաքաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 26-ի N 94 որոշմամբ կարգավորվում են Լեռնային Ղարաքաղի Հանրապետությունում մշտապես բնակվող Լեռնային Ղարաքաղի Հանրապետության քաղաքացիներին, օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց Լեռնային Ղարաքաղի Հանրապետության տարածքից դուրս ամուսնություն գրանցելու համար Լեռնային Ղարաքաղի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից ընտանեկան կարգավիճակի վերաբերյալ տեղեկանք տալու կարգը և պայմանները:</p>
<b>2.</b>	<b>Առաջարկվող կարգավորման բնույթը</b>
	<p>Նախագծի շրջանակներում առաջարկվում է ընտանեկան կարգավիճակի վերաբերյալ տեղեկանք հայցողին երկլեզու՝ հայերեն-անգլերեն կամ հայերեն-ռուսերեն տեղեկանք տրամադրել, դրա համար գանձելով Լեռնային Ղարաքաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 12-ի N 608-Ն որոշմամբ նախատեսված ծառայության մատուցման համար վճար:</p>
<b>3.</b>	<b>Ակնկալվող արդյունքը</b>
	<p>Նախագծի ընդունմամբ կկրճատվեն օտարերկրյա պետություններում գտնվող անձանց՝ ամուսնության բացակայության վերաբերյալ տեղեկանքի տրամադրման ժամկետները, հաշվի առնելով երկլեզու տեղեկանքների տրամադրումը, որոնք հնարավորություն են ստեղծում էականորեն խնայել փաստաթղթերի թարգմանության հետ կապված ծախսերը և ժամանակը:</p>
<b>4.</b>	<b>Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք</b>
	<ol style="list-style-type: none"> <li>1. Լեռնային Ղարաքաղի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ</li> <li>2. Լեռնային Ղարաքաղի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի ՔԿԱԳ և նոտարիատի գործակալություն</li> <li>3. Լեռնային Ղարաքաղի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության և օրենսդրության կատարելագործման բաժին</li> </ol>
<b>5.</b>	<b>Այլ տեղեկություններ</b>
	<p>Նախագիծը օրենսդրությամբ սահմանված կարգով դրվել է հանրային քննարկման Լեռնային Ղարաքաղի Հանրապետության արդարադատության նախարարության պաշտոնական կայքէջում, որի արդյունքում առաջարկություններ չեն եղել:</p>

## **ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 94 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ  
ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 26-ի N 94 որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ**

## **ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 94 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ  
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՏՈՒՄ  
ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱՋԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 26-ի N 94 որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի պահանջում:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ**

